

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

ԱՅՆՔԵԱՐԻՄ ԳԻՒՂԻ ՀԱՅՈՑ

ՎԱՆՔԸ ՈՒ ԵԿԵՂԵՑԻՆ

Ք.

4. — Այնքեարիմի Հայոց վանքին ու եկեղեցոյն ննախօսական քննութիւնները :

Սոյն վանքին ու եկեղեցոյն նկատմամբ կատարուած հնախօսական քննութիւնները պիտի յիշատակենք. — Ա. — 1854ին, Գերմանացի Քոպլէր գիտնականը անձամբ կատարած է այդ վանքին աւերակաց ուսումնասիրութիւնը և սա եզրակացութեան եկած է թէ այդ աւերակները նշաններ ցոյց տուած են հետաւոր հնութեան մը, մինչև երգ կամ նոյն իսկ Գրգ դար. իր խօսքերն են. « Պատերը խիստ թանձր են, և ցարդ անփնաս մնացած կամարները՝ շատ հաստատուն: Պատերը՝ այնչափ հաստատուն են որ կարելի է քսել թէ անոնք տասնեհինգ դարեր կարողացած են տակալ և զերծ մնալ փլուզումէ: Չափեցի անկիւնաքար մը՝ որ ունէր երկու մէթր երկարութիւն, վաթսուս սանթիմէթր բարձրութիւն և նոյնքան թանձրութիւն:

Աւանդութիւնը՝ այս հաստատութիւններուն համար ընտրած է խիստ սեղանազանի վայր մը՝ որ թոյլ չկրնար տալ միննոյն հաւասարութիւնը ունեցող գեանի մը վրայ հաստատել մեծ շէնք մը: Մենք հոն ճշգրտաւ չգտանք երկյարկանի շէնքի մը գոյութիւնը: Գուարէամիսո՝ լատին կրօնատար մը նոյն վանքը կը նկատէ երկու մասի բաժնուած շինութիւն մը. կարելի է կարեւորացնել թէ կային հոն ստորնայարկ շէնք մը, դէպի հիւսիս, և վերնայարկ շինուածք մը, դէպի հարաւ, մին միւսին ետեւը, խիստ զանազան հաւասարութեամբ, այնպէս որ՝ ստորնայարկ եկեղեցիէն վերնայարկ եկեղեցին կրնային ելնել սանդուխի մը միջոցաւ: (*St's Topographie Von Jerusalem*, Հար. Բ. Պերլին, 1854. էջ 355-356):

Բ. — Երբ, 1861ին, նոյն վանքին ու եկեղեցոյն գեանը կատարելագոյն մաք-

րուած էր, և ստորնայարկը նորոգուած. Անգլիացի Գոնտէր և Քիչնէր անոնց մասին հետեւեալ տեղեկագիրը ներկայացուցին. «Այն Սիբրի Մարիամ բուսած աղբիւրին արեւուտարը, հարաւային բլուրին վերայ, և սուսական նորաշէն հիւրանոցին խիստ մօտիկ, լատինք՝ 1861ին, աւերակներ գտած են, երբ կը շինէին Չաքարիայի գիւղական տան նոր մատուար: Գեանը մաքրուած էր 15-20 ոտք խորութեամբ և գտած են հին եկեղեցոյն ստորին յարկը, Յովհաննէս Բոլոնրբի յիշատակութեան համաձայն. վան գի նոյն ուխտաւոր ուղեգիրն էր որ 1422ին, կը զրէր թէ Այն Գեարիմի վանքը ունէր ստորերկրայ մատուար և վերնայարկ եկեղեցի մը. . . . : Հօն ցոյց կը արուի այն վէմը, որ մոմի պէս կակուղնալով, պատուարեց փոքրիկն Յովհաննէս Մկրտիչ, Հերովդէտի վրնուորներու հալածանքէն: Այս մատուարն զուրս, դէպի հարաւ, կը տեսնուին կործանուած կամարներ և կոնքեր (arcade), հին վանքի մը մնացորդը: Պատերը լաւ շինուած են եզերքները տաշուած կմբաւոր քարերով (bossage) են: Արեւմուտքէն կարելի է մտնել բակի մը մէջ, ուր միակաւոր սիւնի մը վրայ, կը բարձրանայ քարէ կամարի հատուածը (segment) ցած սրածայրով. ասիկա կամարի մը մնացորդն է, և միւս մասը փլած: Քանի մը քարեր շեղակի քանդակուած են, բայց անոնց վրայ չեն տեսնուիր որմազրի նշանները:

Բակին հիւսիսային կողմի ճեմնիքէն, նեղ ստափճան մը կը տանի վերև յիշատակուած վերնայարկ եկեղեցին, որուն պատեղուն վարի մասը միայն մնացած է, կողակը և սեղանը կարելի է գծել: Եկեղեցիին ներսի կողմը, յանցելումն, կրճակով (stue) ձեւովուած էր և կային որմանկարներ: Կճածեփին վրայ կը նշմարուին շատ մը որմազրիներ (graffito) և քարի մը վրայ կոշտօրէն քանդակուած է քահանայապետին եփուարը (éphod) կամ վակաւր. այս քանդակը շինուած է անտարակոյս համաձայն աւանդութեան մը՝ որ անճշգորէն կ'ենթադրէ թէ Չաքարիան քահանայապետ մ'էր: Կողակին հարաւային կողմը կը գտնուի աւազանը: Յետոյ մատուարին կողմը, դարձեալ դէպի հարաւ, կը տեսնուին խուցերու և ստափճաններու հետքեր:

Այս աւերակները մասամբ մը ծածկուած էին զեօնին տակը մրգատտանի մը՝ որ երբեմն կը ծածկէր բոլոր այս տեղերը, ուր գտնուած են մատուռը, խուցերը և ուրիշ շէնքեր: Քարէ յիշատակարանաց պակասը ցոյց կուտայ թէ այս վանքին շինութիւնը ժ՛հ: դարու չի վերաբերիր և թէ խաչակիրներու ժամանակ շինուած չէ ան: Այս տեղ կան երկու ազրիւրներ » : (Տե՛ս (Survey of W. Palestine, Mémoires III, Londres, 1883, էջ 60-61):

5. — Դոյն եկեղեցւոյն առանձնաբարկութիւններն :

Պաղեստինագետ Մէյսթէրմէն՝ իր վերագոյն յիշատակուած երկատիրութեան մէջ, նկատի կ'առնու թէ բոլոր այցելութեան եկեղեցիներն աւելի ուշադրութիւն գարծուցած են վանքին աւերակներուն. ան կը յարէ թէ եկեղեցին կը ներկայացնէ յատկանշական և հրահանգիչ քանի մը առանձնաբարկութիւններ, որ կը թուի թէ խուսափած են նոյն այցելուներու ուշադրութենէն. իր բացատրութիւններն կը գնենք հոս նոյնութեամբ. Եւանջը շինուած է խուսոր քարերով, որոց ուշադրութիւն գարծուցած են բոլոր ուղեգիրներ. բայց եկեղեցիին սնորքը պէտք է զիտել աւելի ուշադրութեամբ: Հիւսիսային արեւելեան կողմը. անկիւնաքարի մը չափն է 1 1/2 մէթր երկարութիւն, 1 մէթր բարձրութիւն և 1,15 լայնութիւն և 5,000 քիլոկրամ ծանրութիւն. ստոյղ է որ անոր շուրջի քարերը այնքան մեծ չեն, բայց գարձեալ խոշոր քարեր են: Ներսի կողմը, կողակը պահած է չորս վիմաշարքեր, իւրաքանչիւրը 65 սանթիմէթր բարձրութեամբ և ոմանք ալ մէկ մէթրէ աւելի երկարութեամբ: Քարերը լաւ շարուած են և կցուածքները ա՛յնպէս կատարեալ են որ կարելի կ'ըլլայ բազդատել զաննք Հռոմէական ա՛յս կերպ կառուցուածքներու հետ:

Կողակին մենախուցներէ (retrait) երեօին միւրն վրայ քանդակուած է քահանայապետին եփուտը, զոր արդէն ծանօթագրւած են Անգլիացի քննիչները: Աւելցնենք թէ ինչ որ զիտողութեան արժանի է, սա է թէ այս փոքրիկ քանդակը առաջին անգամ կ'նկարով ձեփուած վիճակի մէջ զըտնուած է. ինչպէս նաև կողակին մնացեալ

մասերը. և այս կ'ճակը ծածկուած էր նրկարներով: Արդ այս նկարները, պէտք է զիտել որ ամէնէն ուշ, ժ՛հ գարուն շինուած են, ինչ որ աւելի կը բարձրացնէ եփուտը ցոյց տուող քանդակին հնութիւնը: Եփուտը՝ հին քրիստոնէից կարծիքին համաձայն, կը վերաբերէր Զաքարիային: Յիշատակուած սրմազրերն քանդակուած են քարի վրայ: Կողակին մէջ կը տեսնուին հայկական, յունական և լատինական հին խաչերու գծադրութիւններ, ամենքն ալ գտնուած են նկարներով գարդարուած կրճակին տակ: Եկեղեցւոյն կողմնակի պատերուն վրայ, կը նշմարուին իրարու վրայ եղած երկու ձեփեր, երկուքն ալ կը կրեն գունաւոր հեաքեր. երկրորդը յայտնապէս գարդարուած է սրբոց պատկերներով: Սեղանին զբաւած տեղը շատ աւելի զբաղան հնութեան մը նկարագիրը կ'ընծայէ: Սեղանին հիմը, որ զեռ կը տեսնուի, 1,50 մէթր երկարութեամբ, 1 մէթր լայնութեամբ և 50 սանթիմէթր թանձրութեամբ կրային միակտուր քար մըն է: Այս քարին վարի մասը սկիզբէն հողին մէջ մըտած է. անաթէ ինչպէս. սեղանը անընդմիջաբար կառուցուած է բարձրութեանը վրայ՝ այն երեք աստիճաններուն՝ որ կը տանին դէպի կողակը: Վերի աստիճանը զրեթէ երկու մէթր երկարութեամբ փորուած է սեղանին հիմը կազմող քարին մէջ, այնպէս որ՝ սեղանին առջև 30 սանթիմէթր լայնութեամբ տեղ մը միայն կը մնայ: Ուրեմն յայտնի է թէ՛ սեղանը իր նախնական տեղը կը զբաւէր, և պատարագիչը սեղանին հետը կը կենար, երեսը դէպի ժողովուրդը գարծուցած:

Առաջնակամ հրամանակներու համաձայն, եկեղեցիները դէպի Արեւելք կառուցանելու սովորութիւնը երգ. գարուն սկսած է. քահանան կը պատարագէ սեղանին առջև, նայելով դէպի Արեւելք և քամակը գարձընելով ժողովրդին: Սակայն նախապէս շինուած եկեղեցիներուն մէջ, ընդհանրապէս սեղանը կը պահէր իր նախնական տեղը, մինչև մատարան կամ եկեղեցիին քանդումը կամ նորոգութիւնը, նոյն խակ, մինչև ժ՛հ գար, յանցելու մն, կը տեսնուի որ սեղանը կը հաստատուէին կողակին առջև, յարմարներով այնպէս, որ քահանան կարենար սեղանին հետը կենալ, գէմքը գար-

ձրնելով հաւատացեալներուն: Բայց այս պարագան կանոնէն շեղում մըն էր, և չի գտնուիր ո՛ր և է օրինակ մը՝ որով կարելի ըլլայ հաստատել թէ մի գարուն, Պաղեստինի մէջ, այս հին սովորութիւնը նորոգուած է:

Իրանքնառ թէ Մեծացուցիչի եկեղեցին ճշգիւ Արեւելք չի նայիր: Իր առանցքը կը կազմէ մագնիսային հիւսիսով 138 աստիճաններու անկիւն մը. այսինքն թէ նոյն եկեղեցին կը նայի հիւսիսային արեւմուտքէն հարաւային արեւելք: Որովհետեւ եկեղեցւոյ սնարքը լերան կռիւնած է. դուցէ առարկուի թէ արեւը իր ծագումէն շատ վերջը միայն այստեղ կ'երևի, երբ աչքը արդէն կը տեսնէ որ արեւը արդէն շատ հակած է դէպի միջօրէն, որով կարելի է բացատրել թէ ինչո՞ւ եկեղեցին դէպի արեւելք ուղղուած է: Այս խորհրդածութիւնը ստուգելու կ'ունենար իւր արմէքը և թոյլ պիտի շտար պնդելու եկեղեցւոյն դէպի Արեւելք հակելու (orientation) պարտոյնի մասին, եթէ սեղանը ունենար աստղաբանական կանոններով պարտադրած դիրքը: Բայց իրաւամբ, վասն զի պատարագիչը երեսը դէպի հիւսիսային արեւմուտք դարձնելուն պատճառաւ, պէտք է եղբակացընել թէ եկեղեցին շինողները դէպի Արեւելք նայելու ո՛ր և է օրէնք չէին գիտեր, և ուրիշ մտազբաղում չեն ունեցած, այլ միայն եկեղեցին կառուցանել իրենց բարեպաշտութեան թելադրած ծրագրին և տեղւոյն արբամադրութեան պահանջմանց համաձայն:

Վերջին նկատողութիւն մըն ալ. սեղանին ձախը, կողակին կողմը, կայ նեղ դուռ մը, որուն սեմը հողէն վեր է 30 սանթիմէթը և կը տանի քառակուսի, բայց անկանոն սենեակ մը, գրեթէ երկու մէթրնոց: Ամբողջ վարի մասը փորուած է ժայռին մէջ, 1—2 մէթր բարձրութեամբ: Այս սենեակը միակն է իր տեսակին մէջ. և ո՛ր և է եկեղեցիի մէջ, նման շինուածքի մը չենք հանդիպիր: Ինչո՞ւ համար այս փոքրիկ սենեակը խնամքով մը կապուած է կողակին հետ: Արդեօք Զաքարիայի տան կը վերաբերի. և այս սենեակը՝ իր ժայռոտ մասովն արդեօք եղիսարեթի հինգ ամբուան առանձնութեան բնակարանն էր. ուրիշ ի՞նչ յիշատակ կրնար ներկայացնել այն քրիստոնէից, որ կառուցին այս եկեղեցին:

Անողուտ պիտի ըլլար՝ այս մասին կարծիք մը յայտնել, վասն զի ուղեգիրները ծանօթագրութիւն մը չեն հաղորդած մեզ: (Տե՛ս «La Patrie de Sainte Jean Baptiste», էջ 172-175):

6. — Այնքեարիմի Հայոց վանիկն ու եկեղեցւոյն Ազգ. յիւսակարանները:

Այնքեարիմի Ս. Կարապետի վանքին հիմնարկութեան ծագման մասին պատմութիւնը արձանագրութիւն մը չունի. միայն՝ Անաստաս հայ վարդապետը՝ իր Ս. Տեղեաց ցուցակին մէջ, «Մամիկոնեանց վանքն որ յանուն Ս. Կարապետին» խորագրով կը յիշէ երկու վանքեր, մին՝ քաղաքէն դուրս, որ «լեւոնախողման» Հայոց վանքն է, միւսը՝ Սիօնի մէջ: Մամիկոնեանք՝ քանի որ Տարսնոյ Ս. Կարապետ վանքին հովանաւորը եղած են, անտարակոյս պիտի փափաքէին Ս. Կարապետի ծրնրնդավայրին՝ Այնքեարիմի մէջ, կառուցանել իշխանավայել յիշատակարան մը: Հայք՝ մինչև Խաչակրաց ժամանակ, Մամիկոնեանց սոյն վանքին խաղաղ կերպով տիրացած էին և ո՛չ ոք զիրենք անհանգիստ կ'ընէր: Սալաէտօտինի երուսաղէմի գրաւումէն յետոյ է որ նոյն տեղւոյն վրայ կը ծագին սեփականութեան խնդիրներ: Սալաէտօտին՝ Պաղեստինի շրջականները, իրեն հետ պատերազմող յաղթականներուն շնորհած էր հողեր, որոց մէջ կը գտնուէին վանքեր և եկեղեցիներ: Սալաէտօտինի հողային այդ ազարդենները՝ հին և նոր սեփականատէրերուն միջև խնդիրներ երևան բերին և պաշտօնական դիմումներու դուռ բացին (Տե՛ս «Meistermann», la «Terre Saintes», 1925, էջ 33): Այդ կարգի հողերէն կը կարծուէին Հայոց լեւոնախողման վանքի սեփականութիւնները և այդ պատճառաւ նեղութեանց կ'ենթարկուէին տեղւոյն վանականները: Ս. Աթոռիս զիւանական թըղթոց մէջ կայ եղիպտոսի Սուլթան Մէլէք Սալիհի (1240—1250) մէկ հրովարտակը, որով կը թոյլատրուի հայ վանականաց, համաձայն արքունական հին հրամանագրերու, տիրանալ նոյն վանքին և տեղի շտալ անձգութեանց, և կ'արդելու գրացիներուն անիրաւ ընթացքը: (Տե՛ս Ժմնկղրկն. Պատմ. Երազմ.ի, Հար. Ա. էջ 184): Բայց կ'երևի թէ շատ քիչ ժամանակի համար, կողակի թէ շատ քիչ ժամանակի համար, սեղանը մը ունեցու այս բարձրագոյն հը-

բամանք. վանն զի, ինչպէս տեսանք ուխտաւոր ուզեցիրներու մանրամասն ծանօթագրութենէն, զբացիները շարունակած են իրենց ապօրէն պահանջները, վանքն ու եկեղեցին քանդելու, անբնակելի դարձրնելու իրենց բոլոր յարձակումները: Հայ Միաբանութիւնը ամէն գնով կը տակար սակայն, և կը շարունակէր իր աշխատանքը. այնպէս կը տեսնուի որ արուած նեղութիւններուն հակառակ, անխափան կը կատարուէին ժամասացութիւնք, զբշարական և զբական զբազումներ, ինչպէս ցոյց կուտան յիշատակարանք. մեր այս տեսութեան ի վկայութիւն, հոս կը գնենք նոյն հատակոտոր յիշատակարանաց օրինակները: Այսպէս, Յովնանեկ արեղայ մը. 1386 թուին, ձեռագիր մը կը նուիրէ «չեանակողման» վանքին. «... յիշեցիք զվերջին զսացաւդ սորայ զովանեկ արեղայ, որ զգիրս գեցի ի սեռ Գրիգորի որ ի Սեւ. և դարձեալ տուի ի շնոնակողմն ի յիշատակ ինձ և ձեռնաց ինձ ի բռնին ՊԼԵ» (Ձեռ. Թ. 89): Դարձեալ նոյն ձեռագրին մէջ, ուրիշ գրիչ մը, Ասեփանու, 1390ին, կը գրէ. «Գրեցաւ սակաւ զիրս ի հոշակաւոր անապաս շնոնակողման, որ յանուն Սր. Յովհաննէս Կարապետին, ՊԹ, Յուշիս Ժ. ձեռակը Ասեփանեկուսի. . . Սր. Երուսաղեմի Գրիգոր Մըսրբոյն»: Այս Ստեփանոս Սեբաստացին է որ 1390ին, նոյն վանքին մէջ, կ'ընդօրինակէ «Մաշտոց» մը. «Գրեցաւ սակաւ զիրս ի հոշակաւոր անապաս շնոնակողման որ յանուն Ս. Յովնանեկ Կարապետին ի բռնին ՊԹ ձեռակը Ասեփանեկուսի, յեպիսկոպոստեան Սր. Երուսաղեմի սեռ Գրիգորի Մըսրբոյն», (Թ. 661): Դարձեալ նոյն գրչէն, 1392ին, «... Ողորմես Քս. և միարան եղբարցս շնոնակողման կրտսեւորացս և զորմաւորացս սոն հասարակ. ի բլ. ՊԽ, կազմեցաւ ձեռակը անարժան Ասեփանեկուսի. (Թ. 271), «Սաղմոսարան-ժամագրքի» մը, 1392 թուականաւ նոյն գրչին մէկ յիշատակարանէն. «... ևս և ինձ ի սրեկ խոցերոյս և մեղօք խաւարերոյս քերտաւոր աշխատողի սորս և կազմողի Ասեփանեկուսի և միարան եղբարցս շնոնակողման մեղաց բողբոսիս ինչոյն. . . ի բլ. ՊԽ կազմեցաւ Սաղմոսարան». (Թ. 271): Նոյն վանքին մէջ Մասրեան կրօնաւոր մը կը կազմէ Սարգիս Շնորհաւուց «Մեկ. Կաթողիկեայ թղթոց» գիրքը (Թ. 299) ու կը գրէ հետեւեալ ան-

թուական յիշատակարանը. «... գրեցնող սորս զՄասրեանս գրեցնող սուսանուն կրտսեւոր յիշեցիք յաղօրս ձեռ. սոյ կազմեցաւ սոն յանապասիս ընդ հոնանեաւ Սր. Կարապետին և Սր. Վիսիկ և Սր. Ածածնիս և Սր. Մերնիսիս. . . »: 1417-19ին կը յիշատակուի Լեոնակողմեցի Աստուածատուր միակեց մը որ Պօղոս Գառնեցի Ա. Աթոսոյս ատաղջնորդին (յեռայ կաթողիկոս) հետ, խոշոր ձեռքերով մը զբշարական նպատակով է, «և ընդ նմին յիշեցիք զԱստուածատուր միակեցի զԼեոնակողմեցի, որ ՚ի ծախքն ազնակամ եղև. . . »: (Թ. 1): Ուրիշ մը, Յովնանեկ արեղայ, 1448ին, զարձեալ նոյն վանքին մէջ կը կազմէ «Յայտաւորք» մը (Թ. 1822) և կը գրէ. «Կազմեցաւ այնատուրս «Լեոնակողման» վանքն Սր. Յովնանեկ Մկրտչին ձեռակը սուսանուն Յովնանեկ անուակը արեղայի ՚ի բլին ՊԳԷ. . . »: Կայ նաև յեպիսկոպոստեան Սր. Քաղաքի Երուսաղեմայ սեռ Մեարոպայ և սեռ Աբրահամին» ընդօրինակուած անթուական Գանձարանի մը յիշատակարանը, որ այլ ազգային Ս. Տեղեաց հետ, կը յիշատակուի նաև սուրբ շնոնակողմը (Տեւ «Նօսարք Հայոց», էջ 19): Մեարոպ և Աբրահամ եպիսկոպոստները Ա. Աթոսոյս զահակալ գտնուած են 1445-1461: Սր. Աթոսիս (Թ. 1662) ձեռագիրը ընդօրինակած են Ս. Հրեշտակապետաց վանքին մէջ, մին՝ Մանուէլ, 1466ին միսն Սարգիս, 1469ին, Լեոնակողման վանահայր Աբրահամ քահանայի համար. յիշատակարաններն են. «... գրեցաւ սոն ի բլին Հայոց ԶԺԲ. . . ձեռակը Մանուէլի ՚ի խեղոյ Աբրահամ ինչի հար վանից Սր. Յովնանեկ Մկրտչին Լեոնակողման», «... ձեռակը Սարգիս սպասաւորի Սր. Հրեշտակապետաց ի յիշատակ և ՚ի վայելուցն սրբաւոր կրօնաւորիս Աբրահամ արեղային, սպասաւոր Սր. Յովնանեկ Լեոնակողման. բլ. ԶԺԲ. մայիս ԺԵ. »: Ուրեմն յայտնի կ'ըլլայ թէ այս միջոցներուն Այնքեարի մի վանքին միաբանութիւնը ճնշումներու տակ ստիպուած է թողուլ վանքը, որ զբացիներուն քանդումներուն հետեանքով հեղահեղ սկսած է աւերիլ: Ինչպէս տեսանք, օտար ուզեցիրներ մինչև 1586 կը յիշատակեն վանքին կրօնակործան պատերը և անոնց վրայ նշմարուած որմագրերն: Ա. Աթոսոյս վաստակաւոր միաբաններէն Յովհաննէս եպս. Երուսա-

ղիմացի (Հաննէ, № 1733), կը գրէ թէ իր ժամանակ, նոյն վանքին պատերը միայն գոյութիւն ունէին. իր տողերն են « . . . էր սա փառաւոր վանք, և ունէր եկեղեցի գմբեթաշէն յոյժ գեղեցիկ ի ձեռս ազգիս Հայոց լեալ. որ և միաբանք իսկ բնակէին ի սմա. բայց ի չարութենէ . . . ի վաղ ժամանակաց երկու հարիւր ամաւ յառաջ փոխեան ի վանացն, և . . . աւերեալ զվանքն ի սպառ քակեցին, որոյ ևս որունն/ն միայն պլմն երևիին: Բայց գոյ մերձ եկեղեցւոյն դարպաս մի մեծ իբր պանդոկ, որ ստին թէ՛ գինետուն վանիցն . . . » (Պատմ. Երուսաղէմի, էջ 296): Հայ միաբանութեան ըստիպողական լքումէն յետոյ է որ լատինք՝ 1621ին, անյաջող փորձերով, ևս ապա, 1725ին, վերջնապէս՝ կը տիրանան նոյն տեղերուն՝ իսպառ ջնջելով հայկական յիշատակարանները որ կը գտնուէին վանքին աւերակաց մէջ (Ժմեկգրկն. Պատմ. Երուսաղէմի, Հար. Ա. էջ 304—5):

Ստեփանոս Սերաստացի գրիչը, իր երկու յիշատակարանաց մէջ, ինչպէս վերև տեսանք, Այնքեարիմի վանքը կը կոչէ Հոյակաւոր Անապոս և իրաւունք ունէր. վանն զի, համաձայն օտար ուղեգրաց նրկարագրութեան, զոր վերև տեսանք, արդարև նոյն վանքը հոշակաւոր էր իր ճարտարապետական կառուցուածքով և ներքին գեղեցիկ որմանկարչութեամբ. ան հիանալի և հոյակապ յիշատակարան մըն էր, որ կը վկայէր Մամիկոնեանց Նախարարութեան եկեղեցաշէն գործոց, որոց լրձորդուած էր զիւրցազնական ոգին, որ հովանաւորը եղած էր, ինչպէս Մշոյ Ս. Կարապետին, նոյնպէս Այնքեարիմի Ս. Յովհաննու Մկրտչի փառաշուք տաճարին:

ՄԿՐՏԻՉ ԵՊՍ. ԱՂԱԻՆՈՒՆԻ

Ս Փ Ի Ն Զ Ս Ը

Հորիզոնին վրայ կապոյտ՝ հուրէն քրքրուն, միայնակ, երկընցեր է ճինաուրց ըստիմքը, էգ, անագին: Բիւր սարիներ են անցեր. հակասագրին իր հըլու՝ Իր սեղմանկիւն շրքերեով կ'պահէ անհուն առեղծուածն:

Իր ծընած օրը արդէն ապրող բոլոր բաներէն՝ Կը մընայ ի՛նքը միայն: Անցեալին մէջ հեռաւոր, Դողայ կուսայ իր սարին՝ երկբայամիտ խորհողին. Աս պատմութեան ըսուերն ի՛ր իսկ կ'ըսկսի ըսուերէն:

Քազմահողով դարերու հոծ դէզին վրայ ծընողիւր, Արեւին դէմ անխրիթս ցըցելով կուրծի քաջալանց, Առանց բնաւ վար առնելու արեւանունը գոռոզ,

Կ'խօսի, կարծես կ'ըսպասէ, պայծառութեամբ մ'հոգիի, Հրամանի՝ վեր կանգնելու իր բարերուն վրայ հարէ, Աս, յամբալայ, նորէն իր յաւերժութեան դառնալու:

Թրգմ. Թ. Ե. Գ., Գահիրէ

ALBERT SAMAIN

